# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/22 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «17» հոկտեմբերի 2019թ.

2019թ-ի հոկտեմբերի 17-ին՝ ժամը 10:40-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բյուզանդի փ. 1/3 շենք հասցեում գտնվող «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի վարչական շենքում տեղի ունեցավ ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հ. Առաքելյան | «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի փոխտնօրեն՝ նախագահ. |
| Վ. Գալուստյան | «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի Գլխավոր հաշվապահ՝ անդամ • |
| Վ. Սուքիասյան | «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի գնումների համակարգող՝ քարտուղար: |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է 3 անդամից և նիստին մասնակցում էին հանձնաժողովի 2 անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Առաքելյանը, իսկ քարտուղարն էր՝ Վ. Սուքիասյանը:

### ՕՐԱԿԱՐԳ

1. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/22 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/22 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

### 1. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/22 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Վ. Սուքիասյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/22 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը քարտուղարի կողմից նույնությամբ ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/22 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի, իսկ 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած «ՍԵԳ» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Վ. Սուքիասյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/22 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.
1) Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի՝ բավարար.
2) «ՍԵԳ» ՍՊԸ՝ բավարար.

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

## 2. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/22 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/22 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսին, իսկ 5-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ՍԵԳ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Սուքիասյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Առաքելյան ________________

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Գալուստյան ________________

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Սուքիասյան ________________